# ՀՈԴՎԱԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակութային բաժինը Երեւանում, մշակութային գանձերի եւ ժառանգության համաշխարհային օրվա առթիվ (մայիսի 18-ին), անց է կացնում երկու հարեւան բարեկամ երկրների՝ Իրանի եւ Հայաստանի մշակույթի վերաբերյալ հոդվածների մրցույթ.

## ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԹԵՄԱՆ

1. Երկու երկրների մշակույթի, ավանդույթների եւ սովորույթների ընդհանրությունը:
2. Գրականություն եւ պոեզիա:
3. Երկու երկրների գրականության պատմությունը եւ գիտության ու գրականության անվանիների ներկայացում (ընդհանուր):
4. Ընդհանուր պատմական փոփոխությունները եւ բնության եւ մարդկության աշխարհագրական դերը երկու երկրների հարաբերությունների միջեւ:
5. Երկու երկրների պատմական համատեղ կյանքի թողած ազդեցությունը ընդհանուր ավանդույթների եւ բարքերի բնագավառում:
6. Իրանական եւ Հայկական առածների ընդհանրությունները եւ նրանց պատմական արմատները:
7. Իրանի եւ Հայաստանի արվեստի եւ ճարտարապետության ընդհանրությունները:

## ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Հոդվածները պետք է լինեն հայերեն կամ պարսկերեն եւ առնվազն կազմված լինեն տասը էջից (անուն, ճշգրիտ հասցե, հեռախոս):
2. Նյութերը լինեն նոր եւ անցյալում ոչ մի մրցույթում կամ պարբերականում ներկայացված չլինեն:
3. Լավագույն հոդվածները, հոդվածի հեղինակի անվան նշումով, կտպագրվեն երկրում եւ երկրից դուրս լույս տեսնող պարբերականներում:
4. Հոդվածները ժյուրիի կողմից կքննարկվեն եւ առաջիններից երրորդ տեղ գրավածները կպարգեւատրվեն թանկարժեք նվերներով:
5. Հանձնված հոդվածները հետ չեն վերադարձվելու:
6. Հոդվածների հանձնման համար անձամբ դիմել Երեւանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան բաժին եւ ձեռք բերել տեղեկանքներ:


**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**
2 սենյականոց բնակարան
Նորքի 4-րդ զանգվածում,
հեռ.՝ 640321:

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**
2 սենյականոց բնակարան
Նորքի 5-րդ զանգվածում,
հեռ.՝ 611228, 641619:


# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ

Ծրագրի պայմանները բավարարող թեկնածուներին հնարավորություն կտրվի 1 ամիս սովորել Մեծ Բրիտանիայի գործավարության առաջնակարգ դպրոցներում եւ ավարտել ծրագիրը 4-11 ամիս գործնական հմտությունների ձեռքբերմամբ ծրագրին օժանդակող 450 ընկերություններից որեւէ մեկում: Մասնակիցների բոլոր ծախսերը կհոգան ծրագրի կազմակերպիչները եւ բրիտանական կառավարությունը ի դեմս «Know How Fund» կազմակերպության: Մասնակիցներին կտրվի աշխատանքային ծրագրերի փաթեթ, որոնց վրա նրանք պետք է աշխատեն եւ ամսական $2000 աշխատավարձ իրենց առօրյա կարիքները հոգալու համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրվում է դիմել Բրիտանական դեսպանատուն, ինֆորմացիայի բաժին, հեռ. 55-30-81: Դիմելու համար համապատասխան ձեւերը կարելի է ստանալ դեսպանատան գլխավոր մուտքի պահակակետից, հասցեն Չարենցի 28:

Լրացված ձեւերը կարելի է հանձնել մինչեւ սույն թվականի հունիսի 6-ը:

Թեկնածուները պետք է լինեն 22-35 տարեկան, տիրապետեն անգլերեն լեզվին եւ ունենան առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ վերը նշված ասպարեզներում:

Թեկնածուների ընտրությունը կատարվում է 3 փուլով. հասուկ ձեւերի լրացում, անգլերենի (կամ TOEFL) քննություն եւ հարցազրույց:


**ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**
3 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 5-րդ հարկում, 70/50 քմ, ավտոտնակով: Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):
*Հեռախոս՝ 22-42-68*

**ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**
*2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 1-ին հարկում: Վաճառյան 17 շենք*
*Հեռ.՝ 581841, 523056*

**ԲՐԱԲԻՈՆ ԱԳՐՈ ՍԵՐՎԻՍ**
**Աբովյան 11**
Էկզոտիկ բույսեր եւ թփեր, քաղաքային բույսերից կոմպոզիցիաներ, գիտուսային բույսեր, սերմեր, սոխուկներ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ, աշխատանքային գործիքներ, սրսկիչներ, արտահագուստ:
Ամեն ինչ ձեր տարածքի ներքին եւ արտաքին կանաչապատման համար:



Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժին
Անգլերենի խորացված
անընդմեջ դասընթաց
«Օսկար» մրցանակ ստացած ֆիլմերի ցուցադրմամբ



Դասընթացը նախատեսված է անգլերենի միջին եւ բարձր մակարդակ ունեցողների համար:
Ուսուցումը կուղեկցվի վերջին տարիների «Օսկար» մրցանակ ստացած «Պարեր գայլերի հետ» (1990 թ.), «Գառնուկների լռությունը» (1991 թ.), «Աններելին» (1992 թ.), «Շինդլերի ցուցակը» (1993 թ.), «Ֆոռեստ Գամփ» (1994 թ.) եւ «Քաջասիրտը» (1995 թ.) ֆիլմերի ցուցադրմամբ, դրանց մասին հոդվածների ընթերցմամբ եւ քննարկմամբ: Կուսուցանվեն գրելու, կարդալու, խոսելու եւ լսելու հմտությունները: Կտրվեն նաեւ տնային աշխատանքներ, որոնց հիման վրա ուսանողները կգնահատվեն:

- Դասերը կվարի Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ)-ի դասախոս Արզեն Արմենյանը
- Դասընթացները կտեւեն մայիսի 26-ից մինչեւ հուլիսի 18-ը (8 շաբաթ, շաբաթական 9 ժամ)
- Օրերը երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժամը 17:00-ից մինչեւ 20:15
- Ուսման վարձը 95 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
- Գրանցման եւ վճարման ժամկետը մինչեւ մայիսի 23-ը, ՀԱՀ-ի 19 ա սենյակում
- Դասընթացին կընդգրկվեն առաջին 15 գրանցվածները

*Ծանոթություն. մայիսի 19-ին, ժամը 13:00-ին, ՀԱՀ-ում կանց կացվի անգլերենի ստուգում, որը դիմորդներին կօգնի ճիշտ կողմնորոշվել դասընթացի ընտրության ժամանակ:*
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58





Երեւան, Մոսկովյան 18
Հեռ. 58-39-69


«ՍՓՅՈՒՌՔ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՍԵՂՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ՄԱՍԻՆ ... 589167, 581351
... Տպաքանակը 3000 ... 13.05.1997 ... Գինը 100 դրամ